

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԻՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ «ԷՄ ԷՌ ԻՆՎԵՍՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍԻ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վաճառող	Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
Գնորդ	«ԷՄ ԷՌ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ (գրանցման համար՝ 282.110.1047719, ՀՎՀՀ՝ 00917304)
Պայմանագրի առարկան	Պետական սեփականություն հանդիսացող հողամասի ուղղակի վաճառք
Օտարվող գույքը	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ համայնքում գտնվող 97.151 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը (կադաստրային ծածկագիրը՝ 07-004-1598-0022)
Այլ անձանց գույքային իրավունքներ և սահմանափակումներ	Առուվաճառքի պայմանագրի կնքման պահին հողամասը չպետք է ծանրաբեռնված լինի այլ անձանց գույքային իրավունքներով և սահմանափակումներով՝ բացառությամբ հողամասի 90.19 (իննսուն ամբողջ տասնինը հարյուրորդական) հեկտար մակերեսով մասի նկատմամբ գնորդի վարձակալության իրավունքի:
Նպատակը	Հողամասի տարածքում ինտենսիվ այգիների հիմնումը՝ համաձայն սույն որոշմամբ հավանության արժանացած ներդրումային ծրագրի
Պայմանագրի գինը	Հողամասը գնորդին կօտարվի կադաստրային արժեքով:
Պայմանագրի գնի վճարման ժամկետը	100% կանխավճար՝ մինչև հողամասի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքի պետական գրանցումը

Գնորդի վարձակալության իրավունքի դադարումը	Հողամասի՝ գնորդի կողմից վարձակալված մասի նկատմամբ վերջինիս վարձակալության իրավունքը կդադարի՝ ամբողջ հողամասի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքի պետական գրանցման պահից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 429-րդ հոդվածի, հողամասի առուվաճառքի պայմանագրի հիման վրա:
Պատասխանատվություն՝ պայմանագրի պայմանների խախտման համար	Հողամասը գնորդի սեփականությանը անցնելուց 2 (երկու) տարվա ընթացքում սույն որոշմամբ հավանության արժանացած ներդրումային ծրագրի իրականացումը չսկսվելու դեպքում վաճառողն իրավունք կունենա միակողմանիորեն լուծելու առուվաճառքի պայմանագիրը՝ առանց հողամասի վրա գնորդի կատարած անբաժանելի բարելավումները վերջինիս հատուցելու պարտավորության:
Վաճառողի հանդիպական պարտավորությունները	Վաճառողը պարտավոր է իր լիազորությունների շրջանակում աջակցել գնորդին՝ սույն որոշմամբ հավանության արժանացած ներդրումային ծրագիրն անխոչընդոտ և ժամանակին իրականացնելու համար, այդ թվում՝ կապված քաղաքաշինական փաստաթղթերի հաստատման և (կամ) համաձայնեցման և (կամ) տրամադրման, գործունեության և այլ թույլտվությունների տրամադրման, ինչպես նաև հողամասի համապատասխան մասերի նպատակային և (կամ) գործառնական նշանակության փոփոխման հետ: Վաճառողի կողմից իր նշած պարտավորությունների խախտման դեպքում գնորդի՝ ներդրումային ծրագրի իրականացումը սկսելու պարտավորության ժամկետները կհետաձգվեն՝ վաճառողի պարտավորությունների խախտումները վերացնելու համար փաստացի պահանջված ժամկետով:
Պայմանագրի կնքման ծախսերը (հատակագծի, տրամադրում, պայմանագրի նոտարական վավերացում, հողամասի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքի և դրա մասի նկատմամբ օգտագործման իրավունքի դադարման պետական գրանցում)	Գնորդի հաշվին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ